

**ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՄԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Արմինե Վոլոդյայի Ներսիսյան
ՀՊՏՀ «Ֆինանսներ» ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու
Վահան Գևուշի Բաղդասարյան
ՀՊՏՀ «Ֆինանսներ» ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու

Պետական ֆինանսները կարևոր դերակատարում ունեն երկրի սոցիալական խնդիրների լուծման, տնտեսական աճի ապահովման, ձեռնարկատիրական գործունեության աջակցման, տնտեսության կարգավորման և տարածաշրջանների զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման գործում: Այս համատեքստում, պետական ֆինանսները պետք է ունենան բավարար ռեսուրսային հիմք, օպտիմալ ծավալներ և կառուցվածք: Միանշանակ է, որ պետական ֆինանսների ապակայունացված համակարգը կարող է դառնալ երկրի տնտեսական անվտանգությանն ուղղված լուրջ մարտահրավեր, ինչպես նաև՝ տնտեսական զարգացումը և բնակչության բարեկեցության աճն արգելակող կարևորագույն գործոն:

Պետական ֆինանսներին առընչվող առաջնահերթ խնդիրներից է դրանց կայունության հասկացության սահմանումը, այդ կայունության ցուցանիշների որոշումը և կայուն, հավասարակշիռ զարգացման ապահովման միջոցների հիմնավորումը: Ըստ էության, կայուն կարելի է համարել այն զարգացումը, որը տալիս է ընթացիկ խնդիրների լուծման հնարավորություն և չի առաջացնում ռիսկեր գալիք սերունդների համար: Կայունությունը ենթադրում է անցանկալի երևույթները կանխելու համակարգի կարողություն, իսկ դրա ապահովման միջոցները դիտարկվում են որպես աջակցություն և զարգացման ամրապնդում¹:

Եվրամիության գիտնականների կողմից կիրառվող պետական ֆինանսների կայունության հայեցակարգն արտացոլում է ընթացիկ պարտքի և ակնկալվող ծախսերի ֆինանսավորումն ապահովելու կառավարության կարողությունը²: Նրանց բնորոշմամբ, կայունությունը երկարաժամկետ հայեցակարգ է, որն ի վերջո, հանդիսանում է սեփական ծախսերը ֆինանսավորելու երկրի կարողությունը: Միանշանակ է, որ կայուն կարող է համարվել այն իրավիճակը, երբ ֆինանսավորումը բավարար է ինչպես կարճատև, այնպես էլ երկարատև ժամանակահատվածների ընթացքում:

¹ Флуд Н.А. «Как измерить устойчивость развития», Вопросы статистики, N10, 2006, сс.19-29.

² European economy, 9/2009. Sustainability Report-2009, Office for Official Publication of the European Communities, 2009, 160 p.

Պետական ֆինանսների անկայունությունը բնորոշվում է նրանով, որ ընթացիկ և երկարաժամկետ խնդիրների լուծմանն ուղղված ֆինանսավորումն իրականացվում է պետական ֆինանսական պարտավորությունների (պետական պարտքի) այն ծավալների ավելացման ճանապարհով, որոնք պետական ֆինանսների հատվածի բեռնվածքը հասցնում են կրիտիկական մակարդակի: Այս մակարդակին հասնում են այն դեպքում, երբ պետական պարտքի մարմանը և սպասարկմանը, ինչպես նաև երաշխավորված պարտավորությունների կատարմանն ուղղված ծախսերը սահմանափակում են երկրի կայուն և բնականոն զարգացման ապահովման հնարավորությունները:

Պետական ֆինանսների կառավարման արդյունավետությունը էապես կախված է այն ցուցանիշների համակարգից, որոնք բնութագրում են պետական ֆինանսների վիճակն ու կայունությունը: Հիմնվելով ֆինանսական մենեջմենթի ավանդական տեսության վրա՝ պետական ֆինանսների վիճակի գնահատումը ներառում է երկու ուղղություն. **պետության իրացվելիության և վճարունակության գնահատում:**

Պետության իրացվելիությունը կարճաժամկետ հատվածում պարտավորությունները մարելու ունակությունն է, կամ պետական ակտիվների դրամական միջոցների վերածվելու ունակությունը, ընդ որում՝ իրացվելիության աստիճանը բնորոշվում է այն ժամանակահատվածի տևողությամբ, որի ընթացքում կարող է իրականացվել այդ վերածումը: Հետևաբար, որքան կարճ է այդ ժամանակահատվածը, այնքան բարձր է տվյալ պետական ակտիվի իրացվելիությունը: Կիրառական առումով, պետական ֆինանսների իրացվելիությունը կարող է արտահայտվել այն դրամական միջոցների աղբյուրների առկայությամբ, որոնք բավարար են ընթացիկ ծախսային պարտավորությունների կատարման համար:

Վճարունակությունը ենթադրում է բյուջետային պարտավորությունների իրականացման համար անհրաժեշտ միջոցների առկայություն: Ռուս գիտնական Ս.Վլասովի բնորոշմամբ, կառավարությունը համարվում է վճարունակ, երբ այն ի վիճակի է մարել սեփական պարտքերը բյուջեի ապագա պրոֆիցիտների հաշվին¹: Նման մոտեցմամբ պետության վճարունակությունը բերվում է լոկ ընթացիկ ժամանակաշրջանում իր զարգացմանը վերաբերող խնդիրների լուծմանը: Սակայն, հաճախ ստացվում է, որ կարճաժամկետ հատվածում դրական արդյունքների արձանագրումը կարող է պատճառ դառնալ հեռանկարային զարգացման ռիսկերի սրացման: Պետք է հաշվի առնել, որ ընթացիկ խնդիրների լուծման համար կարող են կիրառվել տարբեր միջոցներ. վարկերի ձևով միջոցների ներգրավում, հարկային բեռի ավելացում,

¹ Власов С.А. Теоритические аспекты применения понятия устойчивости государственных финансов, М.: «Компетентность», №6, 2010.

կապիտալ ծախսերի կրճատում և այլն: Հավասարակշռված ֆինանսական քաղաքականության իրականացման դեպքում կառավարությունը կարող է ընթացիկ խնդիրները լուծել ոչ միայն ապագայում պրոֆիցիտների նվաճման ճանապարհով, այլև՝ ներգրավված ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմամբ:

Պետական ֆինանսների կայունությանն առնչվող հարցերի քննությունը ենթադրում է նաև **պետական ծախսերի ծավալների և կառուցվածքի վերլուծություն**: Տնտեսական ճգնաժամի, տնտեսական աճի վերականգնման, կայուն զարգացման, մարտավարական բարեփոխումների իրականացման ժամանակահատվածում պետության ծախսերը էապես տարբերվում են: Պետական ծախսերի և տնտեսական աճի փոխազդեցության գնահատումը մշտապես եղել և շարունակում է մնալ տնտեսագետների քննարկման առաջնահերթ խնդիրներից մեկը: Որոշ տնտեսագետների կարծիքով որքան մեծ է կառավարությունը և որքան բարձր է պետական ծախսերի մակարդակը, այնքան ավելի շատ խոչընդոտներ են ստեղծվում տնտեսական աճի համար, քանի որ ռեսուրսները տնտեսության արտադրողական հատվածից անցնում են պետությանը, որը դրանք օգտագործում է ավելի քիչ արդյունավետությամբ: Հասարակության զարգացմանը զուգահեռ պետությունների կողմից իրականացվող գործառույթների շրջանակն անընդհատ ընդլայնվել է, ինչի արդյունքում մեծացել է նաև պետական ծախսերի դերակատարությունը՝ նախ որպես այդ գործառույթների ֆինանսավորման միջոց, ապա նաև որպես տնտեսության վրա ներազդելու լծակ: Ակնհայտ է, որ տարբեր երկրներում պետության գործառույթները և դրանց ֆինանսավորման ծավալներն ունեն ընդգծված հակասություններ, ինչը կապված է տնտեսական զարգացման մոդելների տարբերությունների, տնտեսությունների կառուցվածքային առանձնահատկությունների, աշխարհաքաղաքական պայմանների և բազմաթիվ այլ գործոնների հետ: Դրանով պայմանավորված, տնտեսապես շատ դժվար է որոշել պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության այն սահմանը, որից հետո պետական ծախսերի միջոցով վերաբաշխվող ազգային եկամտի մեծության ավելացումը խոչընդոտում է տնտեսական աճը: Ըստ էության, պետական ֆինանսների վիճակը կարելի է համարել կայուն, երբ բավարար չափով է իրականացվում տնտեսական աճի ապահովմանն ու քաղաքացիների բարեկեցության մակարդակի բարձրացմանն ուղղված պետության գործառույթների ֆինանսավորումը՝ այն պայմանով, որ դրանց ֆինանսավորման աղբյուրը չի հանգեցնում հարկային բեռի ծանրացմանը և պետական ֆինանսական պարտավորությունների ընդհանուր ծավալի կտրուկ ավելացմանը, ինչպես նաև կառուցվածքի վատթարացմանը /կարճաժամկետ վարկերի աճ, դրանց եկամտաբերության բարձրացում, օտարերկրյա արժույթով անվանագրված

փոխառություններ և այլն/: Ավելի կոնկրետ, պետական ֆինանսները կարող են համարվել կայուն, եթե.

- ընթացիկ ծախսերը ֆինանսավորվում են սեփական եկամուտների հաշվին,

- պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում գերակա տեղ են զբաղեցնում կապիտալ ծախսերը,

- հարկային բեռը չի սահմանափակում տնտեսության զարգացումը,

- պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը չի գերազանցում թույլատրելի սահմանային շեմը,

- ֆինանսական պարտավորություններով պարտքերի ծավալները պետության վճարունակության վրա ապակառուցողական ազդեցություն չեն թողնում:

Ֆինանսական կայունությունը պետությանը հնարավորություն է տալիս լինել կայուն, արդյունավետ և զարգացած, այսինքն՝ լինել բարեկեցության պետություն: Երկիրը, որը հենվում է ֆինանսավորման ներքին աղբյուրների վրա, ունի կայուն տնտեսական աճի ավելի մեծ հնարավորություններ: Այս համատեքստում, երկրի ֆինանսական կայունության պահպանման համար նպատակահարմար է հետևել պետական պարտքի կառավարման հավասարակշռված մարտավարությանը և ռիսկերի կառավարման լավագույն փորձին: Պետական պարտքի խնդիրը մշտապես եղել է քննարկման առարկա ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներով, քանի որ պետական պարտքը կարող է դառնալ տնտեսական անկայունության պատճառ: Պետական ծախսերի ֆինանսավորման նպատակով գրեթե բոլոր երկրները դիմում են փոխառու միջոցների ներգրավմանը, որը և հանդիսանում է արտաքին պարտքի ձևավորման աղբյուր: Ընդ որում, որքան հարուստ է երկիրը և որքան բարձր է կենսամակարդակը, այնքան մեծ է արտաքին պարտքի բաժինը, ինչը բացատրվում է նրանով, որ սոցիալական պարտավորությունների կատարումը և լայնածավալ մակրոտնտեսական ծրագրերի իրականացումը պահանջում են լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Թույլ զարգացած, կամ զարգացող երկրներում պետական պարտքը կարող է հանդիսանալ որպես հարկաբյուջետային քաղաքականությունում առկա անհավասարակշռության արդյունք, ինչը նշանակում է, որ կառավարությունն իրեն հասու ֆինանսական միջոցները զգալիորեն գերազանցող պարտավորություններ է ստանձնել:

Պետական պարտքն ու տնտեսական աճն ունեն փոխադարձ ազդեցության բարդ մեխանիզմ: Պետական պարտքը կարող է խթանել տնտեսական աճը, կամ խոչընդոտել այն՝ կախված նրանից, թե ինչպես են այդ միջոցներն օգտագործվում: Եթե ներգրավված միջոցներն օգտագործվում են տնտեսական զարգացման համար ռազմավարական նշանակություն

ունեցող ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար, ապա այն կնպաստի տնտեսական աճին և երկրի կառավարության համար հավելյալ եկամուտների աղբյուր կհանդիսանա՝ նվազեցնելով պարտքի բեռը: Եթե ներգրավված միջոցներն ավելացնում են պետական պարտքը՝ չխթանելով տնտեսական աճը, ապա միանշանակ է, որ չի պահպանվում պետական ֆինանսների “ոսկե կանոնը”, որի համաձայն կառավարությունը պետք է պարտք վերցնի ներդրումները և զարգացման ծրագրերը ֆինանսավորելու համար, որոնց հիմնական շահառուն ապագա սերունդներն են: Ընթացիկ ծախսերը պետք է ֆինանսավորվեն սեփական եկամուտների հաշվին: Վերջին հաշվով, պետական պարտքի դիմաց կատարվող տոկոսավճարները կլանում են այն միջոցները, որոնք կարող էին ուղղվել հասարակության անապահով խավերի սոցիալական վիճակի բարելավմանը և տնտեսության աշխուժացմանը: Ներգրավված միջոցների օգտագործման ցածր արդյունավետությունը կարող է տնտեսության վրա դրանց փոքր ազդեցության պատճառ հանդիսանալ, իսկ երբ տնտեսական աճը դանդաղում է այլ պատճառներով պայմանավորված, ապա պարտքի սպասարկումը և պարտքային կայունությունը դառնում են խնդրահարույց: Միանշանակ է, որ պետական պարտքի կայունությունը մակրոտնտեսական կայունության և երկարաժամկետ տնտեսական աճի անհրաժեշտ պայման է:

Այսպիսով, ցանկացած երկրի տնտեսական անվտանգության ապահովման հիմնական նախապայմաններից մեկը պետական ֆինանսների կայունության բավարար մակարդակի առկայությունն է, ինչը ենթադրում է կայուն տնտեսական աճ, պետության իրացվելիության և վճարունակության անհրաժեշտ մակարդակ, պետական բյուջեից կատարվող ծախսերի օպտիմալ կառուցվածք՝ կապիտալ ծախսերի տեսակարար կշռի շարունակական ավելացման համատեքստում, սեփական եկամուտների հաշվին ընթացիկ ծախսերի ֆինանսավորում, պետական պարտքի կառավարելի մակարդակ և ֆինանսների “ոսկե կանոնի” պահպանում:

**ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՄԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

Արմինե Վոլոդյայի Ներսիսյան
ՀՊՏՀ “Ֆինանսներ” ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
Վահան Գևուշի Բաղդասարյան
ՀՊՏՀ “Ֆինանսներ” ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

Համառոտագիր

Ֆինանսական կայունությունը պետությանը հնարավորություն է տալիս լինել կայուն, արդյունավետ և զարգացած, այսինքն՝ լինել բարեկեցության

պետություն: Պետական ֆինանսները կարևոր դերակատարում ունեն երկրի սոցիալական խնդիրների լուծման, տնտեսական աճի ապահովման, ձեռնարկատիրական գործունեության աջակցման, տնտեսության կարգավորման և տարածաշրջանների զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման գործում: Այս համատեքստում, պետական ֆինանսները պետք է ունենան բավարար ռեսուրսային հիմք, օպտիմալ ծավալներ և կառուցվածք: Միանշանակ է, որ պետական ֆինանսների ապակայանուցված համակարգը կարող է դառնալ երկրի տնտեսական անվտանգությանն ուղղված լուրջ մարտահրավեր, ինչպես նաև՝ տնտեսական զարգացումը և բնակչության բարեկեցության աճն արգելակող կարևորագույն գործոն:

Բանալի բառեր՝ պետական ֆինանսներ, ֆինանսական կայունություն, տնտեսական աճ, պետության իրացվելիություն և վճարունակություն, պետական բյուջե, պետական ծախսեր, պետական պարտք:

ТЕОРЕТИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОЦЕНКЕ ФИНАНСОВОЙ УСТОЙЧИВОСТИ ГОСУДАРСТВЕННЫХ ФИНАНСОВ

Армине Володьевна Нерсисян
Доцент кафедры “Финансы” АГЭУ,
кандидат экономических наук

Ваан Гевушевич Багдасарян
Доцент кафедры “Финансы” АГЭУ,
кандидат экономических наук

Аннотация

Финансовая стабильность позволяет государству быть стабильным, эффективным и развитым, то есть быть государством процветания. Государственные финансы играют важную роль в решении социальных проблем страны, обеспечении экономического роста, поддержке предпринимательской деятельности, регулировании экономики и создании условий, необходимых для регионального развития. В этом контексте государственные финансы должны иметь достаточную ресурсную базу, оптимальные объемы и структуру. Ясно, что дезинтегрированная система государственных финансов может стать серьезным вызовом для экономической безопасности страны, а также важным фактором, препятствующим экономическому развитию и благосостоянию населения.

Ключевые слова: государственные финансы, финансовая стабильность, экономический рост, государственная ликвидность и платежеспособность, государственный бюджет, государственные расходы, государственный долг.

THEORETICAL APPROACHES TO ASSESSING THE FINANCIAL STABILITY OF STATE FINANCE

Armine Volodya Nersisyan

Associate Professor of ASUE "Finance" Department,
Candidate of Economic Sciences

Vahan Gevush Baghdasaryan

Associate Professor of ASUE "Finance" Department,
Candidate of Economic Sciences

Abstract

Financial stability enables the state to be sustainable, efficient and developed. Public finances play an important role in solving the country's social problems, ensuring economic growth, supporting entrepreneurship, regulating the economy and creating the conditions necessary for the development of regions. So public finances should have a sufficient resource base, optimal volumes and structure. Undoubtedly, the destabilized system of public finances can become a serious challenge to the economic security of the country, as well as an important factor hindering economic development and the welfare of the population.

Keywords: public finances, financial stability, economic growth, state liquidity and solvency, state budget, public expenditures, public debt.